նեց փոքրաթիւ բերդապահ զօրքին, այն ժամանակ բոլորովին ապահովուած էր Հուսէին Ղուլի խանի յարձակումից։ Երբ լուր հասաւ, թէ ռուսաց զօրքերը ջարդել են պարսիկներին Շամխորի և Գանձակի ճակատամարտում՝ Հիւսէին խանը կրկին վերադարձաւ Պարսկաստան, վնաս միայն հասցնելով ժողովրդին նրանով, որ վերջինս ստիպուած էր երկու ամիս կերակրել նորա հեծելազօրքը իրա հաշուով։ Շուտով նա մեռաւ Պարսկաստանում իրանից յետոյ թողնելով երեք որդիք՝ Ալի Ղուլի խանին, Լիւտֆալի խանին և Ֆարաջուլլա խանին։

Երբ 1806 թ. Ռուսները նուաճեցին Բագուայ գաւառը, այդ տեղ խանի տոհմից ոչ ոք չկար. Միրզա-Մահմէդ խանը, ինչպէս վերեւ բացատրուեցաւ իւր ընտանիքով բնակւում էր Ղուբայում. ունէր երկու կին և վեց որդի։ Մի կնոջից ունեցաւ որդիք՝ Աբաս Ղուլի աղային (պոլկովնիկ), Ջաֆար Ղուլի աղային (գեներալ լէյտինանտ)։ Իսկ միւսից հետեւեալ որդիները՝ Ջաւտտ աղա, Ղադիր աղա, Մուստաֆա աղա (պոդպոլկովնիկ) և Աբդուլլա աղա (պոլկովնիկ)։ Դոցանից առաջի երկուսի և Ջաւադ աղայի մահից յետոյ երեք եղբայրները իրանց ընտանիքներով բոլորն էլ ապրում են Ղուբայում, չունենալով Բագուայ գաւառում ոչ մարդաբնակ և ոչ դատարկ կալուածներ։

Կազմեցի այդ նկարագրութիւնը Բագուայ գաւառապետ Կոլլեժսկի Սովետնիկ (Բաբաջան բէկ Դաւթեան) Լազարեւ՝ գլխաւոր Ատեանի պ. Կառավարչի Կովկասի փոխարքայի պահանջի համաձայն և ներկայացրի Բագուայ զինուորական պ. նահանգապետին գեներալ Կոլուբակինին 1870 թուին, մարտ ամսին։

Բագուի այս համառօտ նկարագրութեան ռուսերէն բնագիրը տուեց ինձ Պ. Հայրապետ Ղուկասեանը, որոյ համար մեծ շնորհակալութիւն. իսկ թարգմանութիւնն է վարժապետ Գաբրիէլ Պողոսեանի Բագուեցւոյ։